Սուրբ Ներսես Շնորհալի

Սուրբ Ներսես Շնորհալին Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեծանուն հայրապետներից է: Լինելով Պահլավունիների ազնվական տոհմից՝ ծնվել է Տլուք գավառի Ծովք բերդում, 1102 թվականին: Երիտասարդ տարիներին ստացել է հոգևոր կրթություն, ձեռնադրվել է քահանա, ապա՝ եպիսկոպոս:

Չափազանց տաղանդավոր լինելու և հա-ռուստ գրական ժառանգություն ստեղծելու հա-մար իր ժամանակակից հոգևորականների և ազնվականների կողմից ստացել է Շնորհալի անունը և դասվել Հայ Առաքելական եկեղեցու սրբերի շարքը: Հայտնի է նաև Սուրբ Ներսես Կլայեցի անունով: 1166-1173 թթ. եղել է Հայ առաքելական եկեղեցու 68-րդ կաթողիկոսը:

Մեր եկեղեցու շարականների և տաղերի մեծ մասը Սուրբ Ներսես Կլայեցու ստեղծագործություններն են: Շնորհալու ստեղծած գրականության մեջ բացի հոգևոր և եկեղեցական շարականներից, զգալի տեղ են զբաղեցնում նաև հայրենասիրական գործերը: Հայտնի ստեղծագործություններից է «Առաւօտ լուսոյ» շարականը, որը այբուբենի հաջորդականությամբ եռատող ստեղծագործություն է, Վարդանանց «Նորահրաշ պսակաւոր» շարականը, որի յուրաքանչյուր տան սկզբնատառերը միացնելով ստանում ենք «Ներսէսի երգ» անվանումը: Նշանավոր է նաև «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը՝ բաղկացած օրվա 24 ժամերին համապատասխան տներից, որը թարգմանվել է 36 լեզուներով: Առավել հայտնիներից են նաև «Վիպասանութիւնք» պոեմը, որը համարվում է առաջին չափածո պատմագրական երկը, «Յիսուս Որդի» պոեմը, «Ողբ Եդեսիո» քնարավիպերգական պոեմը:

Թեև Շնորհալին ապրել և ստեղծագործել է միջին դարերում, սակայն իր տոնը նշվում է Սրբոց Թարգմանչաց վարդապետների հետ՝ հոկտեմբեր ամսվա երկրորդ շաբաթ օրը: Հայ Եկեղեցու պատմության մեջ Սուրբ Գրիգոր Լուսավորչից, Ս. Սահակ Պարթևից, Ս. Մեսրոպ Մաշտոցից և Ս. Գրիգոր Նարեկացուց հետո ամենասիրված ու մեծարված սուրբը Ներսես Շնորհալին է:

Նրա շարականները և ստեղծագործությունները եկեղեցասեր հավատացեալների և եկեղեցականների համար հոգևոր ուղեցույց է, որտեղ պարզ և հասկանալի ներկայացված է Աստծո էությունը, որի շնորհիվ մենք ավելի ենք մոտենում Աստծուն:

ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգում գտնվող և բոլորի կողմից սիրված հոգևոր ճեմարանը կոչվում է Ս. Ներսես Շնորհալու անունով:

Հայաստանյայց եկեղեցին 1978 թվականին թողարկել է «Ս. Ներսես Շնորհալի» անունով շքանշան, որը շնորհվում է ազգային բարերարներին և այն գործիչներին, ովքեր մեծ ավանդ են ունենում Հայ Առաքելական եկեղեցու բարօրության համար:

Այս տարի Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց և Ս. Ներսես Շնորհալու տոնը պիտի տոնվի հոկտեմբերի 14-ին: Այս տարի նաև Հայրապետական հատուկ կոնդակով ոգեկոչում ենք առաքելապատիվ Հայրապետ Սուրբ Ներսես Շնորհալու վախճանման 850-ամյակը: Հայրապետական կոնդակով հրավեր է ուղղվում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու թեմական և ազգային, գիտական ու կրթական և այլ կառույցներին որպեսզի գիտաժողովներով, հրատարակություններով ու հանդիսություններով նշանավորեն Սբ. Ներսես Շնորհալու անմար հիշատակը: